

Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԸ ՊԱՀԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ

Պահք պահողները պէտք է արքուն ըլլան, որովհետեւ Սատանան կրնայ կորուսի մատնել թէ՝ պահեցողը եւ թէ՝ պահեցողութիւնը, եթէ երբեք պահեցողը անպարկեշտ բանքասանքներ կատարէ, ինքզինք ուրիշներէն գերիվեր ցոյց տայ, կամ կերակուրները պիղծ նկատէ եւ կամ կեղծաւորներու նման պահեցողութիւն ընէ իր պահեցողութիւնը ուրիշներու նայուածքներէն հեռու պահելով, որպէսզի սնապարծ եւ կեղծաւոր չերեւնայ, բայց փափաքելով նաև որ իր ժուժկալութիւնը նկատուի ուրիշներու կողմէ: Եթք ոչ ոք նշմարէ, ինք առիթը կը ստեղծէ իր խիստ պահեցողութիւնը ցոյց տալու համար, որպէսզի մարդիկ սքանչանան զայն իրազրծելու իր համբերութեան վրայ: Նման պահքեր ո՛չ կը սրբեն եւ ո՛չ ալ կ'արդարացնեն, այլ կը պղծեն եւ կորուստի կը մատնեն (Յովհան Մանդակունի):

Ամէն օր նոյն ժամուն կեր, եւ կեր միայն մարմինը ամրացնելու համար եւ ոչ թէ հաճոյքի համար (Խասիակ Սուրբ):

Քառասմօրեայ պահեցողութեան ժամանակ երք խիստ պահեցողութիւն կ'ընենք, կը մեռնին մեր բոլոր ցանկութիւնները, կը մարի մեր բարկութիւնն ու ցասումը, կը հանդարտի ու կը խաղաղի ամէն խոռովութիւն, որ յառաջ կու զայ որկրամոլութենէ:

Սեծն Արանասիոն

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԽԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրձ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ պիտի մատուցուի սուրբ պատարագ: Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը:

Հոգեւոր խորիրդածութիւն պիտի կատարէ Լիքանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝

Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԽԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

ԱՍՏՈՒՄԱՇՈՒԽՉԻ ՍԵՐՑՈՂՈՒԹԻՒՆ

Ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-8:30, Պուրձ Համուտի Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուկեան – Եռագոյն» սրահին մէջ, 18-40 տարեկան երիտասարդ-երիտասարդուիններու ծանօթացման ընկերային հաւաք, ապա՝ ժամը 8:30-9:00, Աստումաշուխչի սերտութիւն եւ հայ քրիստոնեական կեանքի հաւաքական քննարկում:

Աստումաշուխչի սերտողութիւնը պիտի կատարէ Լիքանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Դիւան Ազգային Առաջնորդարանի

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ քերքը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկալին մօս: Նաև՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԵՒ



ԲՈՒ ԽՈՍՔ ԻՄ ՈՅԵՐՈՒՄ ՏՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԾԱՌՈՒԵՐՈՒՄ ՀՈՅ (Ա.119.105)

ԺԲ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 3 ՄԱՅ 2019

ԹԻՒ 9

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒՄԱՇՈՒԽՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 58.1-14: Հռ. 13.11-14.25:

ՅԻՍՈՒԽ ԶՐԻՍՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՆ ՍԱՏԹԵՈՍ 6.1-21

Ա. Քառասմօրդաց: ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Զգոյշ, Աստումոյ հանդէա ծեր պարտասորութիւնները մարդոց ներկայութեան մի՛ կատարէ գոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրութիւն պիտի չստանար ծեր երկնաւոր Հօրմէն:

Եթք ողորմութիւն կ'ուղես տալ՝ փող ու թմրուկով մի՛ ընել, մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ գովասանք ընդունելու ակնկալութեամբ: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, դում երք ողորմութիւն պիտի տաս, ձախ ծեռքդ քող չգիտնայ, թէ ինչ կ'ընէ ազ ծեռքդ: Այս պիտով ողորմութիւնն զաղտնի ըրած կ'ըլլաս, եւ քու երկնաւոր Հայրդ որ անտեսաննեի է, բայց կը տեսմէ կատարածդ, թեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

Նմանապէս, երք կ'աղօթես՝ կեղծաւորներուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն ժողովարաններուն մէջ եւ հրապարակներու անկինը աղօթել, որպէսզի մարդիկ իրենց աղօթելը տեսնեն: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Այլ երք պիտի աղօթես, մտիր սենեակդ, զողէ՛ դուռը եւ աղօթէ՛ քու երկնաւոր Հօրդ, որ անտեսաննեի է. եւ Հայրդ որ կը տեսմէ կատարածդ, թեզի պիտի հասուցէ յայտնապէս: Տակամին, երք կ'աղօթես, մի՛ շատախոսեր հեթանոսներուն որոնք կը կարծեն, որ երէ երկար աղօթեն՝ Աստումած պիտի լսէ զիրենք: Արդ, մի՛ նմանիր անոնց, որովհետեւ ծեր Հայրը գիտէ ինչ որ պէտք է ծեզի, նոյնիսկ երք տակամին իրմէ խմդրած չէք:

Ուրեմն այսպէ՛ ս աղօթեցէք. «Հայր մեր երկնաւոր, սրբարանուի անունը քոյ արքայութիւնդ, քող կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրենյ մեր հացը այսօր եւս տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը մեռնենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործնեն: Եւ քոյլ մի՛ տար, որ փորձութեան մէջ իյնանք. այլ մեզ չարէն ազատէ: Որովհետեւ քո՞ւկը են միշտ՝ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառը. անչն»: Եթէ մարդոց ներէկ իրենց յանցանքները, ծեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ծեզի: Իսկ եթէ մարդոց չներէկ իրենց յանցանքները, ծեր երկնաւոր Հայն ալ պիտի չներէ ծեր յանցանքները:

ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ **ՊՈՂՈՍ ԱՌԱՋԵԱԼԻ** **ՆԱԽԱԿՆԵՐ**

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՐ
58. 1-14

Այսպէս կ'ըսէ Տէրը. «Ուժգիմ եւ անկաշկանդ պոռա՛, փողի նման ձայնդ քարձարցուր եւ իմ ժողովուրդիս պատմէ իր մեղքերը: Յակորի սերունդին պատմէ իր անօրէնութիւնները:

Ամէն օր զիս կը փնտռեն, կ'ուզեն իմ նանապարհներս նանչնալ, կարծես արդարութիւն գործած ժողովուրդ մը բլայիմ, կարծես իրենց Աստուծոյն պատուիրաններէն երբեք դուրս ելած չըլլայիմ:

Եւ իիմա եկեր արդարութիւն եւ իրաւունք կը փնտռեն ժուկս, եւ կ'ուզեն Աստուծոյ մօտենալ:

Կը հարցմեն. «Ծոմ բոնեցինք, ինչո՞ւ նկատի չառիր: Մենք մեզ նեղցինք, ինչո՞ւ չսեցիր մեզ»: Որովհետեւ, կ'ըսէ Տէրը. «Ծոմ բոնած ատեն դուք ձեր գիտցածը կ'ըմէք դարձեալ: Ձեր աշխատաւորները կը հարստահարէք, ձեր հակառակութիւններն ու կոյինները կը շարունակէք եւ ինեղներն ու աղբատները կը տանջէք:

Այսպիսի ծոմապահութիւն պէտք չէ ինձի: Այսպիսով ձեր ձայնը ինձի չի հասնիր:

Միթէ այսպիսի՞ ծոմ ուզեցի: Պահանջեցի՞ որ մարդս ինքինքի չարչրկէ, կամ գլուխը իննարինցնէ, ինչպէս եղէքը հովին դիմաց, կամ ժուրճի եւ մոխիրի վրայ պառկի:

Ա՞յս է ժու ծոմապահութիւն կոչածդ եւ Տիրոջ համար ընդունելի ծոմապահութեան օրը:

ՊՈՂՈՍ ԱՐԱՋԵԱԼԻ ՆԱԽԱԿՆԵՐ **ՀՈՇՎԱՅՅԵՑԻՆԵՐՈՒՆ** **13.11-14.23**

Սիրոյ այս սկզբունքով ընթացե՞ք, գիտնալով թէ ինչ ժամանակի մէջ կ'ապրինք: Ժամանակն է, որ քունեն արթնևանք, որովհետեւ իմամա փրկութիւնը աւելի մօտ է մեզի քան այս ատեն՝ Երբ հաւատացինք: Գիշերը ահա կ'անցնի եւ ցերեկը մօտ է: Ուստի խաւարի գործերէն հեռանանք եւ լոյսի գէնքերը առնենք՝ ապրելու համար այսպէս ինչպէս վայել է լոյսի մէջ քալողներուն, փոխանակ անառակութեամբ, արբեցութեամբ, խառնակեցութեամբ ու պղծութեամբ, կամ նախանձով ու հակառակութեամբ ապրելու: Տէր Յիսուս Զրիստոսի նմանեցեք եւ մարմնի ցանկութիւնները կատարելու հետամուտ մի՛ ըլլաք:

Հաւատքի մէջ տկարացած մէկը ընդունեցե՞ք առանց իր խիղճը տանջող կասկածները քննադատելու: Օրինակ, մէկը կը հաւատայ, թէ կուռքերու զոհուած միսէն կարելի է ուտել: Ուրիշ մը, որ կասկած ունի այդ մասին, բանջարեղէն կ'ուտէ միայն: Միս ուտողը թող չարհամարիէ չուտողը, իսկ չուտողը թող չըննադատէ ուտողը, որովհետեւ Աստուծ զայն ընդուներ է: Ո՞վ ես դուս որ Աստուծոյ ծառան կը դատես: Տէրը ինք միայն գիտէ իր հաւատքին մէջ կանգո՞ն է անիկա, թէ ինկած: Բայց կատարելէ՛, որ կանգուն պիտի մնայ, որովհետեւ Տէրը կրնայ զայն կանգուն պահել:

ՍՈՒՐԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԱՆ

Բարեկենդան կը նշանակէ բարի կենդանութիւն, խրախճանք, ճոխ եւ առատ ուտելիքներով վայելու օր:

Գլխաւոր շաբաթապահէրու նախորդ Շաբաթ օրը կը կոչուի բարեկենդան եւ այդ առիթով կը թոյլատրուի աւելի ճոխ ուտել: Եկեղեցական օրացոյցի մէջ յաճախ կը հանդիպինք բարեկենդանի յիշատակութեան, որովհետեւ կարեւոր պահքերը ունին իրենց բարեկենդանը:

Բայց բարեկենդաններուն մէջ յատկանշական է Մեծ Պահքի նախընթաց Կիրակի օրը, որ կը կոչուի **ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԱՆ:**

Բուն Բարեկենդանի օրը կը պատրաստեն ճոխ սեղան, կը կատարեն դիմակաւոր խաղեր, խրախճանքներ եւ այլն:

Վանքերու մէջ նոյնիսկ Բուն Բարեկենդանի օրը որոշ ազատութիւն կը տրուէր եւ այդ օրը ժամանակին կը կոչուէր **ԱԲԵՂԱԹՈՂ:**

Բուն Բարեկենդանի նախորդ օրը՝ Շաբաթ երեկոյեան ժամերգութեան ընթացքին, Եկեղեցւոյ խորանի վարգոյրը կը գոցուի, եւ նոյն օրը կը սկսի արդէն ապաշխարութեան ըրջանը: Հոգեւոր արարողութիւնները կը մեղմանան, Ս. Պատարագը կը մատուցուի վարագուրուած խորանին ետեւը: Այսպիսով կը սկսի քառասնօրեայ ապաշխարութիւնը Եկեղեցւոյ մէջ:

Եկեղեցւոյ անուանակոչութեան եւ կամ կարեւոր սուրբերու տօներու առիթով երբ կը մատուցուի հանդիսաւոր Սուլր Պատարագ, վարագոյրը կը բացուի եւ տեղի կ'ունենայ բացատարագ:

Բուն Բարեկենդանի շարականներու կը պատմեն, թէ ինչպէս ստեղծրւեցաւ մարդը եւ ապրեցաւ դրախտի փափկութեան մէջ: Այնտեղ դրախտի մէջ մարդը «ցնծայր զուարձացեալ անտիրական խնդութեամբ», որովհետեւ միշտ կը տեսնէր Աստուծոյ: Բուն Բարեկենդանի շարականներու առանցքը «Դրախտի փափկութիւնը», «Դրախտի զուարձութիւնը» եւ նախատիպ մարդու՝ Աղամի երջանիկ վիճակը կը կազմէ: Քրիստոսը կը յիշատակուի որպէս երկրորդ Աղամ, որ իր միջոցով մարդոց արժանի դարձուց «Դրախտի փափկութեան»:

Բուն Բարեկենդանի շարականները նոյն օրը զուարձացնող մարդոց կը յիշեցնեն նաեւ Դրախտի հոգեւոր երջանկութիւնը եւ ուրախութիւնը:

ԱՌԱԿՆԵՐ

Իմաստութեան սկիզբը Տիրող երկիւղն է, խելացի են բոլոր անոնք, որոնք այդ իմաստութեամբ կ'ապրին իսկ զգօնութեան սկիզբը՝ բարեպաշտութիւնն է Աստուծոյ հանդէպ, բայց ամբարիշտները կ'անարգեն իմաստութիւնն ու խրատը: (Առակաց 1:7)